Արձանագրություն 2

ՀՀ Շիրակ մարզի Շիրակ-9, Շիրակ-10, Շիրակ-11 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծային աշխատանքների նախնական փուլի
հանրային լսումների /2-րդ լսում/

~~Պատվիրատու՝~~ ~~Կատարող~~

ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
ք. Արթիկ

«Հայնախագիծ» ԲԲԸ
30.09.2022 թ.

Քննարկմանը մասնակցում էին.
Արթիկ համայնքապետարանի աշխատակազմի
Քարտուղար — Ա.Սուքիասյանը

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի
նախագահի տեղակալ՝ — Ն.Պետրոսյանը,
Ճարտարապետության և քաղաքաշինության
վարչության պետ՝ — Հ.Դավթյանը,

Մարզպետարանի գյուղատնտեսության և
բնապահպանության վարչության
բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ — Տ.Անանիկյանը
Նույն բաժնի ավագ մասնագետ՝ — Ս.Թումասյանը
Մարզպետարանի քաղաքաշինության վարչության — Հ.Մարտիրոսյան

Շիրակի մարզի բնակավայրերի
ղեկավարներ, շահագրգիռ հանրություն

Շրջակա միջավայրի նախարարության
ՇՄԱՓԿ կենտրոնի փորձագետներ՝ — Ա.Վարդանյանը
Ն. Մովսիսյան
Ն.Նասիբյան

Նախագծի հեղինակային խումբ՝
Ճարտարապետներ՝ — Ա.Ումուրշատյանը,
Ճարտարագետ՝ — Լ.Բաբայանը
Շ.Պետրոսյանը,

Բացման խոսքով հանդես եկավ Արթիկ համայնքապետարանի աշխատակազմի

քարտուղար՝ Ա.Սուքիասյանը ներկայացնելով, որ մարզի համար մշակվում է միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթ: Կարևորելով տվյալ փաստաթղթի մշակման աշխատանքները և հորդորելով ներկաներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել նախագծի քննարկման գործընթացին, պարոն Սուքիասյանը խոսքը փոխանցեց քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ տ-ն Նունե Պետրոսյանին:

Ն.Պետրոսյանը ընդհանուր գծերով ներկայացրեց մշակվող նախագիծը, նշելով, որ այն իր մեջ ներառում է մարզի գրեթե ամբողջ տարածքը՝ բաժանված մի քանի միկրոռեգիոնների: Յուրաքանչյուր միկրոռեգիոն դիտարկվել է թե որպես առանձին միավոր, և թե որպես փոխկապակցված հատակագծային միավորների՝ բնակավայրերի միասնական համակարգ:

Միկրոռեգիոնի մակարդակում դիտարկվում են ընդհանրական խնդիրները, բնակավայրերի միջև կապերը, ենթակառուցվածքային խնդիրները, ռեսուրսների համատեղ օգտագործման, տնտեսական կլաստերների ձևավորման հնարավորությունները՝ համապատասխան ֆունկցիոնալ-հատակագծային կապերով:

Յուրաքանչյուր միկրոռեգիոն իր մեջ ընդգրկում է մի քանի բնակավայր, որոնցից յուրաքանչյուրի համար փաստացի նյութերի հիման վրա մշակվել է հենակետային հատակագիծ՝ հաշվի առնելով արդի վիճակը: Համալիր վերլուծության և հատակագծային սահմանափակումների հիման վրա առանձնացվել են բնակավայրերի զարգացման համար անբարենպաստ հատվածները, իսկ մնացած հատվածի համար առաջադրել յուրաքանչյուր գործառույթի համար առավել շահեկան տեղաբաշխում: Յուրաքանչյուր բնակավայրի համար մշակվել է մի քանի գծագիր՝ հենակետային հատակագիծ, համալիր գնահատման, հեռանկարային զարգացման, նպատակային նշանակությունների փոփոխությունների, ինչպես նաև գոտևորման նախագծեր:

Գոտևորման նախագծով սահմանված չափորոշիչները ծառայում են որպես կանոնադրություն՝ բնակավայրերի քաղաքաշինական միջավայրի ձևավորման գործընթացում և ուղեցույց հանդիսանում բնակավայրերի ղեկավարների համար ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման գործընթացում:

Փոքր ինչ ներկայացնելով գործող նորմատիվ-իրավական դաշտը, զեկուցողը ներկաներին տեղեկացրեց նախագծի շրջանակում լուծված խնդիրների շրջանակը և նախագծի հաստատման կարգը: Աշխատանքի մշակման և հաստատման գործընթացը ներկայացնելով՝ զեկուցողը մատնանշեց փորձաքննությունների անցկացման պարտադիր պահանջը:

Խոսքը փոխանցվեց քաղաքաշինության կոմիտեի քաղաքաշինության և ճարտարապետության վարչության պետ պարոն Հովիկ Դավթյանին, ով ներկայացրեց նախագծի մշակման ընթացքը, փորձաքննությունների անհրաժեշտությունը: տեղեկացրեց նաև, որ նախագիծը մինչ համայնքի ավագանու հաստատմանն ուղարկելը պետք է շրջանառվի ՀՀ կառավարության 2015 թվականին 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի անդամների շրջանում և ստացվեն նրանց կողմից առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա լրամշակված նախագիծը նոր

կներկայացվի հաստատման: Հորդորեց ներկաներին իրենց առաջարկությունները տարբեր փուլերում ներկայացնել նախագծող խմբին:

Ն.Պետրոսյանը նշեց, որ սա թվով երկրորդ լսումն է, որը բնապահպանական փորձաքննական պահանջի հետ է կապված, որից հետո ՇՄԱՓԿ կենտրոնի կողմից պետք է տրվի տեխնիկական առաջադրանք: Մինչև հաջորդ լսումները հնարավորություն կլինի բնակավայրերի կողմից արված բոլոր առաջարկություններն ամրագրելու, փորձելու դրանք համապատասխանեցնել մեր երկրում գործող քաղաքաշինական նորմերին:

Այնուհետև խոսքը փոխանցվեց Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման կենտրոնի /ՇՄԱՓԿ/ փորձագետ՝ Ա.Վարդանյանին, ով մանրամասն ներկայացրեց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության անհրաժեշտությունը, իրավական դաշտը, դրանով պայմանավորված պահանջները, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության օրենքով սահմանված գործընթացը՝ մատնանշելով տվյալ աշխատանքի շրջանակում արդեն իսկ կատարված գործառույթները՝ փորձագետի կողմից նախագիծը այլ մասնագետների դիտարկմանն ուղարկելու և կարծիքներ ստանալու փաստը: Փորձագետը հավելեց, որ նախագիծը շրջանառվել է Շրջակա միջավայրի, ինչպես նաև այլ ոլորտային գերատեսչությունների կողմից և ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները ներակայացվել են նախագծային կազմակերպությանը՝ աշխատանքը լրամշակելու համար:

Խոսքը փոխանցվեց նախագծի հեղինակային խմբի ներկայացուցիչներ՝ Ա.Ումուրշատյանին և Լ. Բաբայանին, ովքեր պրեզենտացիոն նյութի վրա ներկայացրեցին կատարված աշխատանքը, մանրամասնեցին յուրաքանչյուր բաժնում լուծված խնդիրների շրջանակը՝ նախագիծը բնակավայրերի ղեկավարների համար առավել ընկալելի և կիրառական դարձնելու համար:

Շարունակելով խոսքը, Ն.Պեերոսյանը նշեց նաև, որ նախագծի ընթացքում կատարվելիք յուրաքանչյուր քաղաքաշինական փոփոխություն կարող է իր ազդեցությունն ունենալ շրջակա միջավայրի վրա, ուստի անչափ կարևոր է կանխատեսել և գնահատել այդ ազդեցությունը: Եթե այդ ազդեցությունը բացասական է, ուստի այն մեղմելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել մի շարք բնապահպանական միջոցառումներ: Կարևոր է նաև շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների, այն է՝ կազմակերպված աղբահանության կազմակերպում, կանաչապատում, ծառատնկում կամ այլ միջոցառումների ներառումը նախագծում:

Լսման մասնակիցներից տրվեցին հարցադրումներ՝

Լիցենզավորված կազմակերպության ներկայացուցչի կողմից հնչեցվեց հարց կապված նախորդ հատակագծով նախատեսված կանաչ տարածքի հետ, պարզաբանելով, որ տվալ տարածքը իրականում ունի սեփականատեր, որը այդ հողակտորի վրա ունի կառույց, մինչդեռ նախորդ հատակագծով այդ հանգամանքն անտեսվել է:

Պատասխան տրվեց, որ նորմատիվ պահանջների սահմաններում մշակվող նախագծի սահմաններում նախագծողների հետ սերտ համագործության արդյունքում պետք է փորձել շտկել անճշտությունները, անհնարինության դեպքում՝ տվյալ հողակտորի վերադարձի դեպքում անհրաժեշտ է փոխհատուցել նույն մակերեսով այլ տարածք՝ նորմատիվով պահանջվող կանաչ մակերեսն ապահովելու համար:

Պարզաբանելով կադաստրային ճշտումների հետ կապված ընթացակարգը, տիկին Պետրոսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին ակտիվ մասնակցության համար՝ մեկ անգամ ևս առաջարկվեց բոլոր խնդիրները ներկայացնել նախագծող կազմակերպությանը՝ բնակավայրերի համար առավել լիարժեք փաստաթղթեր մշակելու համար:

Զեռնարկող

Քննարկման պատասխանատու՝
Արթիկ համայնքապետարանի աշխատակազմի
Քարտուղար

Ա.Սուքիասյանը

ՀՀ Շիրակի մարզպետարանի
գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության բնապահպանության բաժնի
գլխավոր մասնագետ՝

Տ.Անանիկյան

Արձանագրող՝
գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության բնապահպանության բաժնի
ավագ մասնագետ՝

Ս.Թումասյանը